

УДК 581.6.615

Զ. Գ. ԱՎԱԳՅԱՆ, Ա. Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԾԱՂԿԱՉՈՐ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ԴԵՂԱԲՈՑՍԵՐԸ

Մարդու առողջության պահպանման գործում որոշակի և ոչ վերջին տեղը տրվում է բույսերին:

Հայոց հինավուրց լեռնաշխարհը հայտնի է ֆլորայի և բուսականության հարստությամբ: Այս հարստության և նրա դարավոր տնօրինողների՝ հայ ժողովրդի, փոխադարձ կապի փայլուն ապացույցներից մեկը ստեղծված բժշկական գանձարանն է, որի հիմքը դրվել է դեռևս 1000 տարի մ.թ.ա., այլ կերպ այն ունի մոտ 3000 տարվա պատմություն [1]: Ժողովրդական դեղաբուսության մասին ուշադրության արժանի տեղեկություններ են թողել Խորենացին, Լեզաբան-դեղուը, Կողբացին, Հերացին, Ամասիացին և այլք:

Հայաստանի հարուստ ֆլորան է պատճառը, որ դեղաբույսերի ռումբնափրությունները մինչև այժմ էլ շարունակվում են: Դրանից ելնելով, մեր կողմից ձեռնարկվեցին ԾաղկաՉոր գետի ավազանի դեղաբույսերի ֆլորիստական կազմի ռումբնափրությունները: Նկատի ենք ունեցել նաև այն հանգամանքը, որ այստեղի արժեքավոր բույսերը առավելագույն չափով հավաքվում են, դրանով հաճախ խախտում տեղի բուսական համակեցությունների ներդաշնակությունը:

ԾաղկաՉորը Հայաստանի գեղատեսիլ վայրերից մեկն է: Այստեղ ներկայացված են տարբեր բուսականության տիպեր [2]: Ծաղկունյաց և Թեղենիս լեռնաշղթաների Տյուսիս-արևելյան լանջերում տարածված են կաղնու-բոխու անտառներ [3], իսկ Թեղենիսի հարավային լանջերում՝ կաղնու անտառներ, տափաստանացված կաղնուտներ, տափաստանային բուսականության ֆրագմենտներ [4]:

Ռումբնափրությունների ընթացքում մենք հայտնաբերել ենք 101 տեսակ դեղաբույս, որոնք պատկանում են 95 ցեղի: Վերջիններս էլ ընդգրկված են 43 ընտանիքների մեջ: Հայտնաբերված բույսերի մեջ կան լայնորեն տարածված դեղաբույսեր, որոնք հանդիպում են երկու լեռնաշղթաների բոլոր լանջերին, ընդ որում մեծ պոպուլյացիաներով, և հազվագյուտ հանդիպող դեղաբույսեր՝ Ծաղկունյացի կամ Թեղենիսի որոշակի դիրքադրումներում:

Դեղաբույսերի տեսականիով համեմատաբար հարուստ են Asteraceae, Rosaceae, Lamiaceae, Fabaceae ընտանիքները:

Asteraceae ընտանիքը ներկայացված է 14 տեսակով: Դրանցից արժե նշել հետևյալները. ճարճատուկ սովորական (*Cichorium intybus*), կուստուկ թաղիքային (*Arctium tomentosum*), տերեփուկ կապույտ (*Centaurea cyanus*), օշինդր դառը (*Artemisia absinthium*), տատրակ սովորական (*Tussilago farfara*), խատուտիկ դեղատնային (*Taraxacum vulgare*), հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium*):

Վարդազգիների ընտանիքը ներկայացված է տեսակային նույն քանակությամբ, ինչ որ բարդածաղկավորներինը: Ծաղկունյաց լեռնաշղթայի կաղնու-բոխու անտառները հարուստ են այնպիսի ծառանման թփանման տեսակներով, ինչպիսիք են պոնճենի փշուղը (*Crataegus oxyacantha*), արոսենի սովորականը (*Sorbus aucuparia*), մարեխու տեսակները (մ.շնայինը՝ *Rosa canina*, մ. առատափուղը՝ *Rosa spinosissima*) և թխենի սովորականը (*Pa-*

dus racemosa): Այլոճենու պտուղները որպես դեղաբույս օգտագործվում են հր-նագրչյն ժամանակներից: Վերը նշված ծառերն ու թփերը Թեղեհիսի լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերում հանդիպում են ոչ հաճախ և ոչ բարձր կենսականություն: Որոշ տեսակների պտղակալման փուլը նույնիսկ չի ավարտվում:

Վարդազգիներից խոտային սինոզիայում հանդիպում են երեսնակ սովորականը (*Agrimonia eupatoria*), մարեմխոտ քաղաքայինը (*Geum urbanum*), մարեմխոտ գետայինը (*Geum rivale*), մատառնի ուղիղը (*Potentilla recta*), արյունխմիկ դեղատուռն (*Sanquisorba officinalis*), մորի անտառայինը (*Fragaria vesca*) և այլն:

Ջնայած այն հանգամանքին, որ *Lamiaceae* ընտանիքում նշված է ընդամենը 8 տեսակ դեղաբույս, համարյա բոլոր տեսակներն էլ ուսումնասիրված տեղամասում լայնորեն տարածված են և օգտագործվում են տեղացիների կողմից: Այդ դեղաբույսերի թվին են պատկանում կոչիի ուրցը (*Thymus kotschyanus*), լերդախոտը երեք տեսակներով (լ. ալեհեր-*Teucrium polium*, լ. գորշ-*T. chamedris*, լ. արևելյան-*T. orientalis*), դաղձ երկարատերևը (*Mentha longifolia*), առյուծագի սովորականը (*Leonurus cardiaca*), խնկածաղիկ սովորականը (*Origanum vulgare*):

Ծաղկածոր գետի ավազանում *Fabaceae* ընտանիքից աճում է իշառվույտ դեղատուռն (*Melilotus officinalis*), երեքնուկ մարգագետնայինը (*Trifolium pratense*), վիրախոտ բազմատերևը (*Anthyllis polyphylla*), տափուլու վարդաբույսը (*Lathyrus roseus*):

Գորտնուկազգիների թվին են պատկանում այնպիսի տեսակներ, որոնք օգտագործվում են հնուց ի վեր՝ իրենց արժանի տեղը գտնելով նաև գիտական բժշկության մեջ (գնձմնուկ փոքրիկ-*Thalictrum minus*) և տեսակներ, որոնք նախկինում օգտագործվել են, իսկ ժամանակակից տեսանկյունով օգտագործելի չեն համարվում (ցինգ ճանձային-*Caltha palustris*), քնախոտ պլեանական-*Pulsatilla albana*): Բացի այս դեղաբույսերից հանդիպում է կոժկոտրուկ գարնանայինը (*Adonis aestivalis*):

Boraginaceae ընտանիքի դեղատուռնային պաշարը մեծ է՝ ընդամենը 2 տեսակ. քարխոտ դեղատուռն (*Symphytum officinalis*) և շնալեզու դեղատուռն (*Cynoglossum officinale*): Վերջինս բավականաչափ տարածված է Ծաղկածոր գետի մերձափնյա մասում՝ ավազուտային հողերի վրա:

Մեզ հայտնի են մատիտեղազգիների ներկայացուցիչները որպես լայնորեն օգտագործվող դեղաբույսեր՝ ինչպես ժողովրդական բժշկության մեջ, այնպես էլ գիտական. մատիտեղ թռչնոց-*Polygonum aviculare*, մ. օձային-*P. carneum*, մ. ջրասպիպեղ-*P. hydropiper*, մ. դեղձատերև-*P. persicaria*, ավելուկ սովորական-*Rumex acetosa*: *Brassicaceae* ընտանիքից հանդիպում է հովվամախաղ սովորականը (*Capsella bursa-pastoris*), որը տարածված է ամենուրեք:

Ծաղկունյաց լեռնաշղթայի կաղնու-բոխու անտառներում, Թեղեհիսի տափաստանային բուսականությունում սովորական են հազարատերևուկը, երիցուկը, սրահուղները (ս. ծակուտկեն, ս. անհարթ), առյուծագին, ճարձատուրկը, մատառնին, փրփրուկը, մորին...

Ռսումնասիրված անտառներում գարնանը ծաղկում են բուսատեսակներ, հնուց հայտնի որպես դեղամիջոց՝ գնարբուկ գարնանայինը (*Primula veris*), մանուշակ հոտավետը (*Viola odorata*), սագասոխուկը (*Gagea*), կաթնախոտ կծու (*Polygala amara*):

Բավականին բազմազան է դեղաբույսերի տեսակային կազմը տափաստանային բուսականության մեջ և տափաստանային կաղնուտններում: Այստեղ հաճախ կարելի է հանդիպել ուրց, կատվադաղձ, հազարատերևուկ, օշինդր, լերդախոտ, դանթափա և այլն:

Թեղեհիսի լեռնաշղթայի սոճու անտառում թույլ արտահայտված խոտային սինոզիայում դեղաբույսերի տեսակային քանակը անհամեմատ քիչ է: Այդ փոք-

րիկ դեղատուեն են կազմում աստղաբույս մեծը (*Astrantia maxima*) և մանուշակ հոտավետը:

Ռուսումնասիրված տարածքում կան բուսատեսակներ՝ հայտնի իտալական և ֆրանսիական բժշկությունում, որոնց ասկայն այժմյան դեղաբուսության մեջ առանձնակի արժեք չեն ներկայացնում: Դրանք են՝ իծախոտ դեղատուեն (*Echium rubrum*), աստղաբույս մեծը, ցարաովույտ երփներանգը (*Coronilla varia*):

Ծաղկաձոր գետի ավազանում սակավ է հանդիպում լոշտակ սպիտակը (*Bryonia alba*): Լոշտակն այն բույսերից մեկն է, որ նախկին տվյալների համաձայն այստեղ գրանցվել է որպես լայնորեն տարածված դեղաբույս: Լոշտակի աստիճանական ոչնչացումը հավանաբար կապված է տեղացիների և հանգստացողների կողմից այդ բույսի արմատների անխնա հավաքման հետ:

Ջրափոսազգիներից լայնորեն տարածված են ջրախոտ մեծը (*Plantago major*), ջրախոտ նշտադաձևը (*Plantago lanceolata*):

Մեր ռուսումնասիրված տարածքում եղինջը նախկինում ներկայացված է եղել երկու տեսակով. եղինջ երկուեն (*Urtica dioica*), եղինջ այրող (*Urtica urens*), որոնք երկուսն էլ հայտնի են որպես լավ դեղաբույսեր: Մեր կողմից հայտնաբերվել է միայն մեկ տեսակ՝ եղինջ երկուենը:

Բարձրակարգ սպորավոր բույսերից ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիս արևելյան լանջերում տարածված է արական պտերը (*Dryopteris filix-mas*): Հիշյալ պտերը սակավ է հանդիպում Թեղենիսի անտառներում:

Դեղաբույսերի նշված 101 տեսակներից տեղացիները և հանգստացողները լայնորեն օգտագործում են 29-ը՝ ուրց, մայրամախոտ, կատվախոտ (որը բավական քիչ է հանդիպում), դանթափա, մասրենի, սզնի, դաղձ, ավելուկ, եղինջ, պոհուդ, տատրակ, օշինդր, եզան լեզու, խնկածաղիկ, մատիտեղ, հագարատերուկ, անթառամ և այլն:

Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերում աճում է լորենին, որը բավական մեծ տարածություն է գրավում, ռուսի ամառային շրջանում կարելի է լորենու ծաղիկներ հավաքել:

Մեր ռուսումնասիրությունների ժամանակ նկատվեց, որ մի շարք դեղաբույսեր վարակված են սնկային հիվանդություններով: Լայնորեն տարածված են *Oomycetes*, *Ascomycetes*, *Basidiomycetes*, *Deuteromycetes* դասի սնկերը: Ըստ սնկերի տեսակային քանակի գերակշռում է *Ascomycetes* ընտանիքը (9 տեսակ): Ամենից շատ հիվանդություններ հանդիպում են բարդածաղկավորների (6) և վարդազգիների (6) ներկայացուցիչների վրա: Կնձկավոր դափնյակի (*Daphne glomerata*) վրա հանդիպում է մեկ հիվանդության հարուցիչ երկու տարբեր փոխը. *Fomopsis oblonga* և *Dioportha eres*: Այս երևույթը հայտնաբերում էր արաջին անգամ: Նոր տեսակ է հայտնաբերվել *Ramularia fumariae* տեսակը դեղատու ծխաբույսի վրա:

Մեր կողմից հայտնաբերված են մի շարք հիվանդություններ ծառանման տեսակների վրա՝ կաղնու, մասրենու, տանձենու, խնձորենու, սզնու, ինչպես նաև խոտաբույսերի վրա՝ սիբեիսի, կատուկի, երիցակի, օշինդրի, խատուտիկի, Թրթնջուկի, ճարճատուկի, մատնուտու:

Համեմատելով մարմարիկ և Ծաղկաձոր գետերի ավազանների դեղաբույսերի ֆլորիստական կազմը, նկատել ենք մեծ քանակությամբ մեկնույն տեսակի բույսեր: Մարմարիկ գետի ավազանում ավելի հաճախ հանդիպում է կատվախոտը, ճարճատուկը, պտերը, ձիաձետը (Ծաղկունյաց լեռնաշղթա), քնախոտը (Փամբակի լեռնաշղթա): Բայց Մարմարիկ գետի ավազանը դեղաբույսերի տեսականիով գիշում է մեր ռուսումնասիրած ավազանին:

Բուսական աշխարհը շատերի տարբերն է: Առաջին մարդիկ բնատուր այդ գեղեցկությունները ցանկանում են տեսնել ոչ միայն դրանում, այլ նաև տանը: Եվ հետևանքը լինում է այն, որ ոչնչացվում են շատ բույսեր, դրանով խախտում բուսական համակցությունների անադարտությունն ու ներդաշնակությունը:

Այս երևույթները առաջ են գալիս հաճախ այն պատճառով, որ ճիշտ չեն հավաքվում բույսերը և, մասնավորապես, դեղաբույսերը, որի հետևանքով մի

շարք բուսաբանական կանգնած են անհետացած երկրի և տեղ են գտել Կարմիր գրքի մեջ (օր.՝ տպիտակ լրջումով):

Այս ուղղությամբ Հայաստանում պետք է ստանել բացատրական աշխատանք: Պետք է անել հնարավոր ամեն ինչ խնայելու բնությունը, բուսական հարստությունը, պահպանելու դարերի ընթացքում նրա անդժամ բոլոր բարիքները, ֆլորայի բազմազանությունը: Միայն արոսացավ վերաբերմունքը հնարավորություն կտա բնությունը հանձնելու ամբողջ սերունդներին այնպես, ինչպես կա հիմա:

Բուսաբանության ամբիոն

Ստացվել է 24.05.1990

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Վարդանյան Ս.Ա. Բժկությունը հին և միջնադարյան Հայաստանում: Երևան, 1982:
2. Ավազյան Զ.Գ., Ռիդարյան Բ.Ի., Սիմոնյան Ն.Շ. Ծաղկածորի կիրճի անտառափին բուսականությունը: ԵՊՀ Գիտ. տեղեկագիր, 1982, №1:
3. Авакян К.Г., Дилдарян Б.И., Гюсян А.Р. Дубово-грабовый лес и остепненная дубрава южного склона Техенисского хребта Арм. ССР.-Уч. записки ЕГУ, 1986, №3.
4. Օհանյան Կ.Օ. Հայկական ՍՍՀ տարածքի ֆիզիկա-աշխարհագրական շրջանցումը: Երևան, 1977:

К.Г.АВАКЯН, А.Л.МКРТЧЯН

ЛЕКАРСТВЕННЫЕ РАСТЕНИЯ БАССЕЙНА РЕКИ ЦАХКАДЗОР

Резюме

Изучена таксономическая структура лекарственных растений бассейна реки Цахкадзор. Выявлен 101 вид лекарственных растений из 95 родов. Наибольшим количеством видов представлены семейства Asteraceae, Rosaceae, Lamiaceae. Одни виды лекарственных растений произрастают в дубовых лесах как на северо-восточных склонах Техенисского, так и Цахкуняцкого хребтов, другие - только на южных склонах Техенисского хребта в остепненной дубрава и в степном фитоценозе. Многие виды лекарственных растений широко используются местным населением.

K.G.AVAKIAN, A.L.MKRTCHIAN

HERBS OF TSAHKADZOR RIVER BASIN

SUMMARY

Herbs of Tsahkadzor river basin, their taxonomical composition, spread, frequency of occurrence and vitality have been studied in the paper. 101 types of herbs, belonging to 95 species and 43 families are revealed. The types of herbs mostly used by the local population, which are known in popular and scitific medicine are mentioned here. The data of comparative analysis of herbs from Tsahkadzor and Marmarik river basins are brought. Some information is given about fungi infection of herbs. The problems of prevention of herbs are also put forward in the paper.